## INTESOL 190 hour TESOL Certificate

## Դասընթացի նկարագրություն

INTESOL-ի 190 դասաժամից բաղկացած դասընթացը ունի որակյալ ուսումնական բովանդակություն և ոչ միայն ճանաչված է գործատուների շրջանում, այլև հանդիսանում է իդեալական հարթակ, որտեղից կարող եք սկսել ուսուցչի կարիերան: 190 դասաժամից բաղկացած TESOL-ի դասընթացը իրենից ներկայացնում է 40 ժամանոց համակարգված և գնահատվող դասավանդման փորձ, որի շնորհիվ դուք կարող եք ձեռք բերել CELTA որակավորում առավել ճկուն ձևով: Առցանց տարբերակով, ձեզ հարմար ժամանակում ուսումնասիրեք տեսությունը և այնուհետև ձեզ համար հարմար ժամանակ վերցրեք առցանց դասավանդման պրակիտիկա: Ստացեք TESOL-ի հավաստագիր՝ դասավանդման փորձի հետ միասին առանց 4 շաբաթ անօգուտ վատնելու ձեր ժամանակից:

## Ինչու՞ ընտրել հենց այս TESOL-ի դասընթացը

Դուք կարող եք մասնակցել TESOL-ի դասերին առցանց ձեր համակարգչով, բջջային հեռախոսով որտեղ և երբ ցանկանաք: Չկա մեկնարկային կամ ժամային սահմանափակում: Դուք ազատ եք կազմակերպելու ձեր դասերը այնպես ինչպես դուք կցանկանաք: Դասերը կարող եք անցկացնել անգամ ծովափում: 190 ժամ ներառող TESOL-ի դասընթացը պարունակում է համակարգված մոդուլներ՝ պատանիներին անգլերեն սովորեցնելու համար: Այս հավելյալ տեղեկատվությունը ոչ միայն օգտակար կլինի ձեզ, երբ սկսեք սովորեցնել, այլև հնարավորություն կտա ձեզ ցույց տալու ձեռք բերված հմտությունները, որոնք անհրաժեշտ են TEFL-ի անձնակազմի համար: Մենք վստահեցնում ենք ձեզ, որ ձեռք բերված գիտելիքներով դուք կտարբերվեք բոլորից: INTESOL-ն արդեն 26 տարի է՝ TEFL/ TESOL-ի համար պատրաստում է ուսուցիչներ, ինչի շնորհիվ էլ TEFL/ TESOL-ի ոլորտում զբաղեցնում է իր արժանի տեղը: Սա նշանակում է, որ TEFL/TESOL-ի հավաստագիրը միանգամից կընդունվի իր բարձր որակի շնորհիվ: 190 դասաժամ ներառող TEFL-ի կուրսը պաշտոնապես ընդունված է

արտաքին աշխարհի կոմից այսինքն՝ սովորեցնելու մեթոդները մանրամասնորեն ուսումնասիրվել են՝ համապատասխանելու ոլորտի չափանիշներին: Դուք կարող եք վստահ լինել, որ կունենաք արդյունավետ և օգտակար ուսման փորձ:

Ձեր դասապատրաստողը կլինի փորձառու և կունենա առնվազն TESOL-ի դիպլոմ (քանի որ շատերը ունեն TESOL-ի մագիստրոսի կոչում:) Նրանց օգնությամբ դուք ձեռք կբերեք անհրաժեշտ գիտելիքներ:

INTESOL-ը ամբողջ աշխարհի մասնաճուղերի հետ ունի ամուր ցանցային կապեր ներառյալ՝ Ճապոնիայի, Իրանի, Հնդկաստանի և Ռուսաստանի հետ: Ինչպես նաև, INTESOL-ը զարգացրել է բազմազան հարաբերություններ EFL-ի դպրոցների և TEFL/TESOL-ի թեժ աշխատակետերում հավաքագրողների հետ: Մենք պատրաստ ենք օգնելու ձեզ գտնել ամենալավ աշխատատեղը:

**Հավատարմագրություն/ Պաշտոնական ճանաչում**

TESOL-ի 190 դասաժամ ներառող դասընթացը Մեծ Բրիտանիայում կրթական որակավորում շնորհող առաջատար կազմակերպության՝ Awarding Language Acquisition for Professionals-ի կողմից հավատարմագրված է: ALAP-ին հավաստագիր շնորհող կազմակերպություն է, որը մասնագիտացված է ELT ոլորտում: ALAP-ին աջակցում է Academic Panel-ը (գիտական հանձնաժողը): Հանձնաժողովում ներգրավված են Անգլերենի դասավանդման հմուտ մասնագետներ: ALAP-ի հանձնաժողովը զբաղվում է այնպիսի հարցերով ինչպիսն է՝ ուսումնական որակ, վստահեցնելով որ ALAP-ի կողմից շնորհվող հավաստագիրը ունի բարձր արժեք:

**Դասընթացի նպատակները**

INTESOL-ի 190 դասաժամից բաղկացած TESOL-ի դասընթացի հիմնական նպատակն է ապահովել ամբողջական դասընթաց, որը հիմնվում է այլալեզու մարդկանց անգլերեն դասավանդելու տեսության, փորձառնության և մեթոդաբանության վրա: Ինչպես նաև, լիովին պատրաստել մեր մասնակիցներին արտերկրում դասավանդելու համար:

**Ընտրման կարգ**

Դասընթացին կարող են մասնակցել նրանք, ովքեր ունեն լավ ակադեմիական գիտելիք, ավարտել են ուսումնական հաստատություն: Որակավորում ստացած ուսուցիչներ կամ առնվազն երկրորդ մակարդակի (A) իմացությամբ: Եթե վստահ չեք, որ համապատասխանում եք վերը նշված պահանջներին գրեք էլ. փոստի հետևյալ հասցեին՝ lyndahazelwood@intesoltesoltraining.com

**Դասընթացի կառուցվածքը**

TESOL առցանց դասընթացին գրանցվելուց հետո քսանչորս ժամվա ընթացքում դուք կստանաք ձեր մուտքի տվյալները INTESOL առցանց ուսումնարանում: Դասընթացը բաղկացած է հինգ դասից (ընդհանուր տասնմեկ մոդուլ): Յուրաքանչյուր մոդուլ բաղկացած է դասից, որը դուք կսովորեք ձեզ հարմար ժամանակում և առաջադրանքից, որը դուք կկատարեք և կգնահատվեք ձեր ուսուցչի կողմից: Առաջադրանքների գնահատումից հետո էլ. փոստով կստանաք հաղորդագրություն և կիմանաք ձեր գնահատականը ներառյալ՝ խորհուրդներ ձեր դասապատրաստողից: Մոդուլը ձախողելու դեպքում մի անհանգստացեք, ձեզ հնարավորություն կտրվի կրկին կատարելու առաջադրանքը լրացուցիչ պարապմունքներից հետո: Վերջնական քննություններ չկան: Վերջին հանձնարարությունը գնահատելուց հետո հնարավորություն կտրվի տեսնել ձեր վերջնական գնահատականը: Վերջնական գնահատականը հաշվարկվում է վերցնելով տաս դասի ընթացում ստացված միջին գնահատականները: Վերջնական գնահատականը կնշվի TESOL-ի հավաստագրում:

**Առցանց Դասավանդման Պրակտիկա**

Դասընթացը մատչելի է, խնայում է ձեր ժամանակը և հասանելի ամեն վայրում: Անհրաժեշտ է միայն համակարգիչ, վեբկամերա, ականջակալներ, և արագ ինտերնետ կապ: (ներքևում տե՛ս տեխնիկական պահանջներ): Ձեզ կտրվեն դասեր, որոնց պետք է

պատրաստվեք: Դասերի պլանները և նյութերը կուղարկվեն այն դպրոցի ուսումնական մասի ղեկավարին, որտեղ դուք դասավանդելու եք: Ձեզանից կպահանջեն սահմանել ամսաթվեր, և դասերը կհարմարեցվեն ձեզ և տվյալ դպրոցի համար համապատասխան ժամերին: Ձեզ հնարավորություն կտրվի ամեն անգամ դասերը տարբեր օրեր անցկացնել: Նաև հնարավորություն կունենաք սկզբում դասավանդել մեկ խմբի, որից հետո դասի անցկացման փորձ ձեռք կբերեք: Ձեզնից ակնկալվում է պլանավորել 6 դասաժամ յուրաքանչյուրը՝ 40 րոպե տևողությամբ: 3-ը տարրական մակարդակի և մնացած երեքը զանազան մակարդակների համար: Ձեզ կուղարկվեն դասերի կազմակերպման մանրամասները:

INTESOL-ի Առցանց դասավանդման պրակտիկան լիովին ճկուն, հարմարավետ մեթոդ է ստանալու CELTA/ TESOL-ի որակավորում՝ ամբողջովին առցանց տարբերակով:

**Դաս 1: Հմտությունների ձեռքբերում**

(Ձգնահատվող) ինչպես լավագույն կերպով կազմակերպել դասապրոցեսը:

Անձնական մոտիվացիա

Դասապրոցեսի պլանավորում և կազմակերպում, ժամանակացույցի կազմում, ուսումնաժամերի փուլեր, գործնական պլանավորում:

*Սովորելու մեթոդներ-* նշումների կատարում, հասկացությունների սխեմաներ, միջուկային նշումներ, մնեմոնիկա:

*Ընթերցման մեթոդների 5 քայլ-* Ընտրում, ճանաչում, բացառում, կազմակերպում, տեղեկատվության փոխանցում:

*Ինչպես է գործում դասընթացը-* դասապատրաստողի դերը, գնահատումը, ինքնուրույն աշխատանքներ:

**Դաս 2: Անգլերենի ուսումնասիրում**

Մոդուլ 1: Դեդուկտիվ վերլուծություն և քերականության կիրառում (խոսքի մասեր, քերականական տերմինաբանություն, ժամանակաձևեր, անուղղակի խոսք, ներգործական և կրավորական սեռ)

Մոդուլ 2: Հնչյունաբանության էլեմենտներ: Առոգանություն (բարձրացող և ընկնող) նախադասության շեշտադրում, թույլ ձևեր, լեզվի հնչյուններ: Բառի շեշտադրում, շվայի հնչյուններ, հնչույթային աղյուսակ, «արտասանության էության» ուսուցանում:

Մոդուլ 3: Բառապաշարի ընտրություն- հաճախականություն և պատշաճություն- բառապաշարի կազմություն: հոմանիշներ, հականիշներ, բառարմատներ, խոսքի մասեր ներառյալ՝ նախածանցներ և վերջածանցներ:

* Խնդրում ենք նկատի ունենալ, Խորքային քերականության ուսումնասիրումը ներառված է հետևյալ դասընթացի մեջ:

**Դաս 3: ESOL-ի ուսուցանում և ուսումնասիրում**

Մոդուլ 1: ESOL-ի հիմնախնդիրների ուսումնասիրում- հոգատար ուսուցիչ լինելու, սովորողներին ներառելու, գործնական լեզուն կիրառելու, սովորողների ուշադրությունը պահելու, ուսուցչի խոսելաժամանակի, ուղղումներ կատարելու, ESOL-ի դասավանդման մակարդակների, վիզուալ միջոցների, մայր լեզվի կիրառման, քննությունների պատրաստման համար- Cambridge ESOL Մասնագիտական անգլերենի քննություններ, TOEFL և այլն: Քերականության դերը, դասարանական մեթոդներ, անհատական դասավանդում:

Մոդուլ 2: Ունկընդրում և Ընթերցանություն: հմտություններ: Դասագիրք: Տարատեսակ աուդիո նյութեր, հասանելի նյութեր- օտար լեզվով ընթերցանություն, ընթերցանության տեսակներ, տեքստերի տեսակներ, շարադրանքի ընկալման հարցեր, ընթերցանության գործառույթների փուլեր, ընթերցանության գործառույթների մշակում:

Մոդուլ 3: Խոսք և Շարադրանք- ինչ է նշանակում խոսել օտար լեզվով, խոսքի գործառույթների մշակում, խոսքի գործառույթների տեսակները, առանձնացված աուդիո նյութերի ուսումնասիրություն, գրավոր խոսք ուսուցանելու հիմնախնդիրները, շարադրանքը որպես հմտություն, շարադրանքի գործառույթների պլանավորում և կազմակերպում:

Մոդուլ 4: Տեսողական միջոցներ- հասանելի աուդիո-վիզուալ միջոցների ուսումնասիրություն- սեփական հիշաքարտերի և այլ օգտակար միջոցների ստեղծում խավավոր գործվածքի միջոցով:

Մոդուլ 5: Սխալներ- պարզել սովորողների հիմնական սխալները, դասակարգել դրանք, սխալների ուղղման ծածկագրի կիրառություն, սխալների ուղղման և բարելավման համար վարժությունների մշակում:

**Դաս 4: Դասաժամի կազմակերպում և անցկացում**

Մոդուլ 1: Դասավանդում և Ուսանում: նստելու կարգ, անուն, ուսուցչի խոսելաժամանակ, հարցերի կիրառում, տարբերակելու միջոցներ, խնդիրների հաղթահարում, սովորելու տեսակներ- Դասերի փուլեր և ծրագրեր

Մոդուլ 2: Դասի փուլեր- ժամանակի կառավարում, խումբ, անհրաժեշտությունների վերլուծություն, շարադրանքի նպատակները և խնդիրները, խնդիրների կանխատեսում, դասի պլանի նմուշ՝ ըստ մակարդակների:

*Կարևոր է իմանալ* ՝190 ժամանոց դասընթացը համապատասխանում է 150 ժամանոց դասընթացին զումարած դասավանդման պրակտիկան:

**Դասընթացի տևողությունը**

TEFL դասընթացի ավարտումը կախված է ձեր հավելյալ պարտավորություններից: Դասընթացը ներառում է ուսուցման 190 ժամ: Հիմնականում, շատ մասնակիցներ

ավարտում են դասընթացը 3-6 ամսում: Այնուամենայնիվ, եթե ձեզ անհրաժեշտ է ավել ժամանակ, ապա խնդիր չէ:

**Հավաստագրի շնորհում**

INTESOL TESOL հավաստագրերը գնահատվում են հետևյալ կերպ.

A1 - տարբերակում

A2 - գերազանց

B1 - շատ լավ

B2 - լավ

C- անցողիկ շեմի հաղթահարում

**Ի՞նչ է ներառված TEFL դասընթացի շրջանակներում:**

- TEFL- ի հավաստագիր, որակավորում շնորհող կազմակերպության կողմից
- Դասընթացի արձանագրությունը ՝ միևնույն կազմակերպության կողմից
- Հետդարձ դեպի խորքային քերականություն
- Անձնական դասապատրաստողի աջակցություն
- Երաշխավորված մեթոդներ, որոնց շնորհիվ դուք վստահորեն կդասավանդեք
- Միջազգայնորեն ճանաչված որակավորում ձեռք բերելու երաշխիք
- Աշխատանքի ուղղորդում և աջակցություն

Ոչ մի հավելավճար՝ հավելյալ ժամանակի անհրաժեշտության դեպքում: Վերցնում եք այնքան ժամանակ, որքան ձեզ հարկավոր է:

* Խնդրում ենք նկատի ունենալ- Չկա մեկնարկային սահմանում կամ ժամանակի սահմանափակում: Դուք եք որոշում՝ երբ սկսել պարապմունքները: Դասընթացին մասնակցելու համար ձեզ կտրամադրեն անձնական մուտքային տվյալներ: